ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ԾԱԾԿԱԳՐՈՎԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

27-ը հունիսի 2019թ.
ժամը 11^{30}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

-**«Էրոդավ» ՍՊԸ-ի** կողմից **«Մասնագիտական փորձառություն»** որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացված 23-ը հոկտեմբերի 2017թ. կնքված ՆԷ 31/2 պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **20,172,000**, սակայն պայմանագրին կից հավելված 1-ի 19-րդ անվանատողով սահմանված ապրանքատեսակի գինը նշված է 13,000, այնինչ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի հանձման-ընդունման արձանագրությունում և հաշիվ ապրանքագրում նշված ապրանքատեսակի գինը սահմանվել է 13,100 ինչը չի համապատասխանում վերը նշված պայմանագրի 19-րդ անվանատողով սահմանված գնին, իսկ պայմանագրի հավելված 1-ի ընդհանուր գների հանրագումարի արդյունքում պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **20,171,880 ոչ թե 20,172,000**, միաժամանակ պայմանագրում սխալ է կատարված ԱԱՀ-ի հաշվարկը:

- **«Էրոդավ» ՍՊԸ**-ի կողմից 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 6.1) ներկայացված ապրանքներիի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով 4-րդ և 5-րդ չափաբաժինների համար նախատեսված տեխնիկական բնութագրերին: Ստորև համեմատական կարգով ներկայացվում են հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված այն ցուցանիշները, որոնք չեն համապատասխանում դրան.

4-րդ չափաբաժին՝ Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-120սմ)

Ըստ ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի	Ըստ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի
հզորությունը՝ 18÷20 Վտ	հզորությունը՝ 18փ20 Վտ
անկյուն՝ 240^0-ից ոչ պակաս	անկյուն՝ 2400-ից ոչ պակաս
աշխատանքային ջերմաստիճաններ՝ -15^0C-ից ոչ պակաս+40^0C-ից ոչ ավել	աշխատանքային ջերմաստիճաններ՝ -150C-ից ոչ պակաս+400C-ից ոչ ավել

5-րդ չափաբաժին՝ Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-60սմ)

Ըստ ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի	Ըստ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի
հզորությունը՝ 8÷9 Վտ	հզորությունը՝ 8փ9 Վտ
ցրման անկյուն՝ 240^0-ից ոչ պակաս	ցրման անկյուն՝ 2400-ից ոչ պակաս
աշխատանքային ջերմաստիճաններ՝ -15^{0}C-ից ոչ պակաս, +40^{0}C-ից ոչ ավել	աշխատանքային ջերմաստիճաններ՝ -150C-ից ոչ պակաս, +400C-ից ոչ ավել

Միաժամանակ առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 6.1)-ում և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումում (Հավելված 6)-ում նշված չէր կազմակերպությունը և տնօրենի անուն ազգանունը:

6-րդ չափաբաժնի մասով **«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի** կողմից մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը գնահատելու համար ներկայացված **20.04.2018թ. կնքված 20/04/18** ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը չի համապատասխանում հաշիվ ապրանքագրերի ընդհանուր գումարին, միաժամանակ պայմանագրի և հաշիվ ապրանքագրերի գումարները չեն համապատասխանում պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստմամբ նշված գումարի չափին:

«ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի /***Տնտեսող լամպեր (Լուսադիոդային լամպ E-27)***/ մասով ներկայացված տեխնիկական բնութագրով նշվել է 50-60 ՀՑ հաճախականություն, մինչդեռ ընթացակարգի հրավերով սահմանված է 50ՀՑ, ինչը համապատասխանում է ՀՀ-ում օգտագործվող էլեկտրաէներգիայի լարման հաճախականությունը: ընդունելի տարբերակ կարող է լինել 50/60ՀՑ հաճախականությունը, բայց ոչ 50-60 ՀՑ հաճախականությունը, քանի որ այն ենթադրում է հաճախականության տիրույթ, ինչը ընդունելի չէ:

Ընդունել ի գիտություն՝ **«ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատումն իրականացնելիս, գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել պատասխանատու ստորաբաժանման կողմից **25.06.2019թ. ՊՆ035/947** գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **մասնակիցների** կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ս. Սարգսյան
Հանձնաժողովի քարուղար՝	Ա. Մաղաքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը հուլիսի 2019թ.
Ժամը 12^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի քննարկման և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի քննարկման և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. **«ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ, «Էրոդավ», «ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ների** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվեցին առկա անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը **մասնակիցների** կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը գնահատել գնանշման հրավերի պահանջներին համապատասխան.

1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցների հրավերով պահանջվող փաստաթղթերը և ներկայացված տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/32» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ս.Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան